ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԿԱՏԱՐԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. **Գործուղված անձիք**
   Կարեն Աղաբաբյան
   ՀՀ Շրջակա միջավայրի նախարարության իրավախորհիրդատու

2. **Գործուղման վայրը և ժամկետները.**
   Նյու Դելի, Հնդկաստան, 1-5 մայիսի 2023 թ.

3. **Հրավիրող կողմը (առկայության դեպքում).**

   Շրջակա միջավայրի, անտառների և կլիմայի փոփոխության նախարարություն, Հնդկաստանի կառավարություն, համագործակցելով UNEP/Միգրացվող տեսակների մասին կոնվենցիայի (CMS) քարտուղարության հետ (Ministry of Environment, Forest and Climate Change, Government of India, in collaboration with the UNEP/Convention on Migratory Species (CMS) Secretariat):

4. **Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).**

   Հանդիպման նպատակն է համախմբել Կենտրոնական Ասիական թռիչքուղու (CAF) երկրների կառավարություններին, որոնք պատասխանատու են չվող թռչունների, նրանց բնակավայրերի պահպանման և կառավարման համար:

5. **Քննարկված թեմաները (հարցերը).**
   - CMS-ի և Հնդկաստանի կառավարության կողմից ինֆորմացիայի թարմացում CAF-ի վերաբերյալ
   - CAF-ի տարածաշրջանին պատկանող պետությունների կողմից ինֆորմացիայի թարմացում
   - CMS գործիքների վերաբերյալ ինֆորմացիայի թարմացում
   - CAF շահագրգիռ կողմերի վերաբերյալ ինֆորմացիայի թարմացումներ
   - Կենտրոնական Ասիայի թռիչքուղու (CAF) պահպանման և կառավարման իրավիճակի վերլուծություն BirdLife International-ի կողմից
   - Կենտրոնական Ասիայի թռիչքուղու ինստիտուցիոնալ շրջանակի տարբերակներ
   - Գործողությունների ծրագիր Կենտրոնական Ասիայի թռիչքուղու համար
   - CAF-ի վրա ազդող միջոլորտային խնդիրները

6. **Հանդիպումները, ելույթները.**
    - Հայաստանում չվող թռչունների ուսումնասիրության և պահպանման հետ կապված իրավիճակի ներկայացում

7. **Հանդիպումների ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.**
    - Րեզոլյուցիայի նախագիծ. Կենտրոնական Ասիայի Թռիչքուղու նախաձեռնություն / Draft Resolution: Central Asian Flyway Initiative (կցված)
    - Որոշման նախագիծ. Կենտրոնական Ասիայի Թռիչքուղու նախաձեռնություն / Draft Decision: Central Asian Flyway Initiative
    - CMS-ի ներքո Կենտրոնական Ասիայի Թռիչքուղու նախաձեռնության տեխնիկական առաջադրանքների նախագիծ / Draft Terms of Reference for the Central Asian Flyway Initiative under CMS

8. **Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.**

Հանդիպման ընթացքում արվել են հետևյալ առաջարկությունները (Հայաստանի ներկայացուցչի կողմից) և իրականացվել բանակցություններ.

- Ստեղծել նոր մասնագետների խումբ IUCN SSC-ում, որը նվիրված կլինի հատկապես CAF-ի տեսակներին, պահպանման խնդիրներին և CAF-ի շրջանակներում քաղաքականությանը: Համագործակցությունը բանակցվել է Միմի Քեսլերի, Eurasian Bustard Alliance / IUCN SSC Bustard Specialist Group-ի հետ:
- Սկսել համատեղ ուսումնասիրություն չվող թռչունների եվրասիական պոպուլյացիաների բաժանման վերաբերյալ, նրանց միջև, որոնք թռչում են Աֆրիկա և նրանց՝ որոնք թռչում են Հնդկաստան և ավելի հարավ-արևելք: Համագործակցությունը բանակցվել է Շվեյցարիայի թռչնաբանական ինստիտուտի և Հնդկաստանի շրջակա միջավայրի, անտառների և կլիմայի փոփոխության նախարարության հետ:
- Սկսել համատեղ ուսումնասիրություն թռչունների հնարավոր մահացության էներգետիկ ենթակառուցվածքներից ողջ CAF-ում: Համագործակցությունը բանակցվել է BirdLife International-ի հետ:

During the meeting, the following suggestions have been made (by the Armenian representative) and negotiations implemented:

- To set up a new specialist group in IUCN SSC, dedicated especially to the species, conservation issues, and policy in frames of CAF. The collaboration is negotiated with Mimi Kessler, Eurasian Bustard Alliance / IUCN SSC Bustard Specialist Group.
- To begin collaborative study of the splitting the Eurasian populations of migratory birds between those, which fly to Africa and those, which fly to India and further South-east. The collaboration is negotiated with the Swiss Ornithological Institute and the Ministry of Environment, Forest and Climate Change of India.

- To begin collaborative study of the possible mortality of birds from the energy infrastructure throughout CAF. The collaboration is negotiated with BirdLife International.

*Գործուղվող՝*
*Կարեն Աղաբաբյան*